ԿԸՀ 2023 թ. Հայաստանի և այլ երկրների արդյունքները

Հայաստանի ԿԸՀ 2023թ. արժեքը նախորդ տարվա համեմատ աճել է 1 միավորով և հավասար է **47**-ի (2022 թվականին այն **46** միավոր էր)՝ 0-ից (բացարձակապես կոռումպացված) 100 (բացարձակապես մաքուր) սանդղակի վրա: Հաշվի առնելով այն փաստը, որ 2023թ. Հայաստանի ԿԸՀ չափման ստանդարտ սխալի չափը, որը հավասար է 2.54-ի (2022թ.-ին այն հավասար էր 2.47-ի), ավելի մեծ է, քան ԿԸՀ արժեքի աճը (1 միավոր), կարելի է պնդել, որ այս փոփոխությունը վիճակագրորեն նշանակալի չէ կամ գտնվում է վիճակագրական սխալի սահմաններում (տե՛ս նաև ԹԻՀԿ-ի կայքի «Ռեսուրսներ» բաժնի «Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԿԸՀ)» ենթաբաժնի «2023 թվականի Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԿԸՀ)» էջում ներկայացված *Հաճախակի տրվող հարցեր* նյութը):

Ինչպես նշվում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի Արևելյան Եվրոպայի և Միջին Ասիայի տարածաշրջանային վերաբերյալ վերլուծության մեջ. «2018թ. թավշյա հեղափոխությանն անմիջապես հաջորդած առաջին երկու տարիներին **Հայաստանն (47)** ականատես եղավ զգալի ժողովրդավարական և հակակոռուպցիոն բարեփոխումների: Սակայն հետագա տարիներին առաջընթացը կոռուպցիայի դեմ պայքարում կանգ առավ՝ առաջին հերթին այդ բարեփոխումների իրականացման սահմանափակ մասշտաբների պատճառով: Չնայած նրան, որ Հայաստանն, ինչպես և տարածաշրջանի շատ այլ երկրները, դիմակայում է անվտանգության սպառնալիքներին, այն ունի բավարար ներուժ՝ հաղթահարելու այդ դժվարությունները և կիրարկելու արդյունավետ քաղաքականություն՝ ավելի կառավարելի դարձնելու համար կոռուպցիան»:

2023թ.-ի Հայաստանի ԿԸՀ-ի հաշվարկի համար օգտագործված տվյալների աղբյուրների մասին տե՛ս վերը նշված «2023 թվականի Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԿԸՀ)» էջի *2023թ. Կոռուպցիայի ընկալման համաթիվը հաշվարկելու համար օգտագործված աղբյուրները* նյութը: Հարկ է նշել, որ Հայաստանի ԿԸՀ-ն հաշվարկելու համար օգտագործվել են այն նույն աղբյուրները, ինչ նախորդ երկու տարիներին՝ 2021 և 2022 թվականներին: Այդ աղբյուրներն են Բերթելսմանի հիմնադրամի 2024 թ. տրանսֆորմացիոն համաթիվը (**BF (TI)**), Ֆրիդոմ Հաուսի Անցումային փուլում գտնվող պետություններ 2023թ. զեկույցի ***Կոռուպցիա*** ենթահամաթիվը (**FH**), Գլոբալ Ինսայթի Երկրի ռիսկայնության 2022թ. վարկանիշը (**GI**), Փոլիթիքլ Ռիսքս Սերվիսիզ Ինթերնեշնլի Երկրի ռիսկայնության 2023թ. Ուղեցույցը (**PRS**), Ժողովրդավարության բազմազանության ծրագրի (**VDEM**) 2023 թ-ի հրապարակումը և Համաշխարհային տնտեսական ֆորումի (**WEF**) Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցման 2023թ. հրապարակումը:[1]

Գծապատկեր 1-ում ներկայացված են Հայաստանի ԿԸՀ արժեքները 2012թ.-ից մինչև 2023թ. ընկած ժամանակահատվածում:

[1] Տվյալ երկրի ԿԸՀ համաթիվը հանդիսանում է այդ երկրի համաթիվը հաշվարկելու համար օգտագործված բոլոր աղբյուրների համար հաշվարկված համաթվերի միջին թվաբանականը: Մասնավորապես, Հայաստանի ԿԸՀ 2023թ. համաթիվը (47) հավասար է վերը նշված աղբյուրների համաթվերի միջին թվաբանականին:

180 երկիր ներառող ԿԸՀ դասակարգման 2023 թ. աղյուսակում Հայաստանը գրավում է **62-րդ** տեղը (2022 թ.-ին Հայաստանը Ռումինիայի հետ կիսում էր 63-ից 64-րդ տեղերը): **Գծապատկեր 2**-ում ներկայացված են Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների, ներառյալ Հայաստանի 2023 ԿԸՀ արժեքները:



Ինչպես երևում է Գծապատկերից, որ Հայաստանը ԵԽ երկրների մեջ նույնիսկ միջին հորիզոնականներում չէ: Սա նշանակում է, որ Հայաստանը դեռևս շատ անելիքներ ունի՝ գրանցելու համար իրական առաջընթաց կոռուպցիայի դեմ պայքարում:

Ինչպես և նախորդ երեք տարիներին, Հայաստանի ԿԸՀ արժեքը 2023 թվականին (**47**) ևս ավելի բարձր է ԿԸՀ համաշխարհային միջին արժեքից, որը, ինչպես և անցյալ երկու տարիներին, հավասար է **43**-ի: Միևնույն ժամանակ այն ցածր է ԿԸՀ այն արժեքից (50), որից ցածր ԿԸՀ արժեք ունեցող երկրներում, համաձայն հակակոռուպցիոն փորձագետների, կոռուպցիան հանդիսանում է լուրջ հիմնահարց: Այն նաև գերազանցում է իր հարևան երկրների (բացի Վրաստանից) և ԵՍՏՄ մյուս բոլոր երկրների (Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան և Ղրղզստան) 2023 ԿԸՀ արժեքներից: Արդյունքում, բացի **Վրաստանից**, որը 2023 ԿԸՀ համաշխարհային դասակարգման աղյուսակում զբաղեցնում է Հայաստանից ավելի բարձր տեղ (այդ աղյուսակում այն իր ԿԸՀ **53** միավորով կիսում է **49**-ից **52**-րդ տեղերը), նշված բոլոր երկրները այդ նույն դասակարգման աղյուսակում զբաղեցնում են Հայաստանից շատ ավելի ցածր տեղեր: Մասնավորապես, իր մյուս հարևաններից **Թուրքիան** (**34**) կիսում է **115**-ից **120**-րդ տեղերը, **Իրանը (24)՝** **149**-ից **153**-րդ տեղեր, իսկ **Ադրբեջանը** (**23**)՝ **154**-ից **157**-րդ տեղերը: ԵԱՏՄ երկրներից **Ղազախստանը** (**39**) զբաղեցնում է **93**-ից **96**-րդ տեղերը, **Բելառուսը** (**37**)՝ **98**-ից **103**-րդ տեղերը, **Ռուսաստանը** և **Ղրղզստանը** (**26**-ական միավոր)՝ **141**-ից **144**-րդ տեղերը:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի տարածաշրջանային բաժանմամբ՝ Հայաստանը, ներառված է Արևելյան Եվրոպա-Կենտրոնական Ասիա տարածաշրջանի մեջ: **Գծապատկեր 3**-ում բերված է Արևելյան Եվրոպա-Կենտրոնական Ասիա տարածաշրջանի 2023թ. ԿԸՀ դասակարգման աղյուսակը՝ ներառյալ նրա բոլոր երկրների բոլոր աղբյուրների հաշվարկված համաթվերը:


ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵԹԻ
Հանակոռուպցիոն կենտրոն
Կոռուպցիայի ընկալման համաթիվ 2023
Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներ
43
0
ԿԸՀ 2022 գլոբալ միջին
53
47
46
42
42
41
39
37
37
36
36
35
34
33
26
26
23
20
18
53 Վրաստան
47 Հայաստան
46 Մոնտենեգրո
42 Մոլդովա
42 Հյուսիսային Մակեդոնիա
41 Կոսովո =
39 Ղազախստան
37 Ալբանիա
37 Բելառուս
36 Սերբիա =
36 Ուկրաինա
35 Բոսնիա և Հերցոգովինա
34 Թուրքիա
33 Ուզբեկստան
26 Ղրղզստան
26 Ռուսաստան
23 Ադրբեջան =
20 Տաջիկստան
18 Թուրքմենիստան
#CPI2023